
«ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆԿԱՆ» ՎԻՊԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿԻ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Պատմահայր Խորենացու օրինյալ ձեռքով հայկական հնագույն բանահյուսության փրկված նշխարներից է «Վարդգես մանկան» վիպական բեկորը. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»¹:

Շատ անվանի ուսումնասիրողներ են զբաղվել պահպանված սույն հատվածի վերլուծությամբ ու մեկնաբանությամբ և նրանցից յուրաքանչյուրը մի քայլ է կատարել մեզ հասած փշրանքներից քիչ թե շատ ամբողջական պատկերացում ստանալու խնդրում: Այդ ուղղությամբ հատկապես գնահատելի է Ա. Շ. Մնացականյանի գիտական վաստակը, ով բարեխղճորեն ի մի է բերել աղբյուրներում պահպանված հիշյալ վիպական հատվածին առնչվող տվյալները, նախկին հետազոտողների տեսակետներն ու եզրահանգումները և փորձել է նորովի արժեքավորել դարերի խորքից մեզ հասած գրույցի պատարդիկն ու դրա մասին եղած մյուս տեղեկությունները: Մասնավորաբար, նա եկել է այն տրամաբանական եզրակացության, որ Արարատյան դաշտում գտնվող Երվանդ արքայի նստավայրը՝ Արտիմէդը, չի նույնանում «Վարդգէսի աւան»-ին և, ինչպես իր նախորդներից Գ. Ա. Ղափանցյանը, համոզմունք է հայտնել, որ «Տուհաց գաւառը» պիտի որոնել հյուսիսային Հայաստանում²: «Տուհաց գավառ»-ի տեղորոշման խնդիրն արծարծող հետագա ուսումնասիրությունների արդյունքում այն զետեղվել է Տայքում³ կամ «Տա(վ)ուշի տեղում կամ նրա մերձակայքում»⁴:

V դարի հայ իմաստասեր Դավիթ քերականը Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնությունում «փոյուգացի» և «գալատացի» անվանումները փոխարինել է

¹ Մ ո վ ա ի ս ի Խ ո ռ ե ն ա ց ա յ Պատմութիւն հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, Գիրք երկրորդ (այսուհետև՝ Խ ո ռ ե ն ա ց ի, II), ԿԵ: Դեռևս մեկուկես դար առաջ հայագետների ոչինչ հայտնի չէր վիպական այս պատարդիկում ակնարկվող պատմական իրադարձությունների մասին. տես История Армении Моисея Хоренского. Новый перевод Н. О. Эмина (с примечаниями и приложениями). М., 1893, с. 112, 278.

² Ա. Շ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Դիտողություններ «Վարդգես մանկան» վիպական հատվածի վերաբերյալ.ՊԲՀ, 1975, -2, էջ 231-232, Գր. Կ а п а н ц я н. Историко-лингвистическое значение топонимики древней Армении. Ереван, 1940, с. 18.

³ Հ. Մ. Բ ա թ ի կ յ ա ն. «Տուհաց գավառի» տեղադրության հարցի շուրջ.ՊԲՀ, 1976, -4, էջ 201:

⁴ Պ. Մ. Մ ն ա յ ա յ ա ն. «Տուհաց գավառի» տեղորոշման հարցի շուրջ.ՊԲՀ, 1979, -1, էջ 248-249:

«գողերձական, տուհ, վրացի» էթնոնիմներով⁵: Միննույն կերպ են վարվել և Դիոնիսիոս Թրակացու քերականության միջնադարյան մյուս հայ մեկնիչները⁶: Ա. Շ. Մնացականյանը և Հ. Մ. Բարթիկյանը, ելնելով հիշյալ փաստից, կատարել են մի հավանական ենթադրություն. քանի որ փոյուզացիք և գալատացիք իրոք հարևաններ էին, ապա հայկական աղբյուրներում, ըստ երևույթին, նրանց անունները փոխարինվել են աշխարհագրական այլ տարածքում, սակայն նույնպես իրար կից բնակվող տարբեր ազգությունների անուններով: Մեզ առավել հավանական է թվում, որ տուհերի թվարկումը գողերձականների և վրացիների միջև զուրկ չէ պատմաաշխարհագրական հիմքից: Համենայն դեպս, V դարի հայ քերականին չհետևելու և հիշյալ ազգությունները նույն հերթականությամբ չդիտարկելու ծանրակշիռ պատճառներ չենք տեսնում: VII դարի «Աշխարհացոյց»-ում Գողերձական (Մանգիսե) և Կրիս-խեւ կամ Մտկուրիս-խեւի (Վրաց աշխարհի հնագույն մայրաքաղաք Սցիսեթա-Արմազի քաղաքի) գավառների միջև հիշատակված են երկու գավառ՝ Թար (Թոր) և Տանիս-խեւ⁷. վերջինս մեզ է հասել Տուհիս-խեւ և այլ ձևերով, որոնք Ս. Տ. Երեսյանը համարում է աղճատման արդյունք: Այսինքն՝ վաղ միջնադարում «Տուհաց գավառը», հավանաբար, նույնանուն էր Թար և Տանիս-խեւ գավառների կամ զոնե դրանցից մեկի հետ՝ հարավում սահմանակից լինելով պատմական Թռեղք և Ջավախք գավառներին⁸:

Արտիմեդ քաղաքի տեղորոշման հարցում նույնպես որոշակի է Ա. Շ. Մնացականյանի ներդրումը: Նա միանգամայն իրավացիորեն առարկում է այն ուսումնասիրողներին, որոնց կարծիքով Վարդգեսավանը կառուցվել է Արտիմեդի տեղում, սակայն, հավանաբար, սխալվում է՝ ենթադրելով, որ Արտիմեդը գտնվել է այժմյան Էջմիածնի Մայր տաճարի մոտակայքում⁹:

Փորձելով պարզել, թե վիպական հիշատակության արժանացած ո՞ր բնակավայրն էր Արարատյան դաշտում (ավելի ճշգրիտ՝ սեպագիր աղբյուրների «ՎՌ-լազա երկրում»), Շրեշ բլուրից¹⁰ ոչ հեռու՝ Քասախ գետի մոտ, «չեն ու կանգուն»

⁵ Н. А д о н ц, Дионисий Фракийский и армянские толкователи. Пг., 1915, с. 20. Լրիվ նախադասությունը հետևյալն է. «Ազգական է որ ազգի է յայտական, որպես գողերձական, տուհ, վրացի»:

⁶ Վ ա ղ ա ն Ա ղ ե լ լ զ ի. Մեկնություն Քերականի, աշխ. Լ. Գ. Խաչերյանի. Երևան, 1972, էջ 118:

Ե ս ա յ ի Ն չ է ց ի. Վերլուծություն քերականութեան, աշխ. Լ. Գ. Խաչերյանի. Երևան, 1966, էջ 122:

⁷ Ս. Տ. Երեսյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 53, 61, 79, 84-85. տե՛ս նաև քարտեզը:

⁸ Բհարկե, չեն բացատրվում նաև «Վարդգես մանկան» վիպական հատվածում նկարագրված իրադարձություններից մինչև վաղ միջնադար ընկած ժամանակահատվածում էթնիկական տեղաշարժերի և տեղանունների փոփոխման հնարավորությունները:

⁹ Ա. Շ. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 222-225:

¹⁰ Շրեշ բլուրի տեղորոշման վերաբերյալ (Վաղարշապատից մոտավորապես կես կիլոմետր հյուսիս) տե՛ս Ս. Արեսյան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ, Վաղարշապատ, 1899, էջ 555-556, ծան. 1, Եր. Լ ա լ ա յ ա ն. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 61-62, Խ. Ս ա մ ու լ լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, 1931, էջ 120, Ժ. А. Б а й б у р т я н. По поводу древней керамики из Шреш-блур.- «Советская археология», III, 1937, с. 210-212; Ն ո լ յ ն ի՝ Последовательность древнейших культур Армении на основании археологического материала. Ереван, 2011, с. 24-25, карта 1; Ս. Հ. Ս ա ղ ա ղ յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 191, 193 և այլն:

մ. թ. ա. I հազարամյակի I կեսում¹¹, յուրաքանչյուր ոք անակնկալի կարող է գալ, քանի որ քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական քարտեզներում հիշյալ տարածքում նշված է «քաղաք» հասկացությանը¹² համապատասխանող ընդամենը մեկ հնավայր՝ Մեծամորը: Մեծամոր հուշարձանախմբի ավելի քան հինգ տասնամյակ առաջ սկսված պեղումներով¹³ հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են, որ այն բնակեցված է եղել մ. թ. ա. V հազարամյակի վերջում, և (գուցե՝ կարճատև ընդհատումներով) կյանքն այստեղ շարունակվել է մինչև մ. թ. XVIII դարը: Բիսյնական տիրապետության նախօրեին այս հնագույն պաշտամունքային կենտրոնը Վ/Ուազա երկրի ամենանշանավոր բնակավայրն էր, որի միջնաբերդը, նրա շուրջը տարածվող թաղամասերը և դամբարանադաշտերը զբաղեցնում էին մի քանի հարյուր հեկտար տարածություն: Հարթ տեղանքում վեր բարձրացող հրաբխային կոների վրա կառուցված միջնաբերդն օղակված էր պաշտպանական պարիսպներով: Այնտեղ կենտրոնացված էին պալատական շինությունները, տաճարական համալիրը և արտադրական գլխավոր միավորները՝ ձուլարանները, հումքի հարստացման կառույցները, արհեստանոցները¹⁴: Է. Վ. Խանզադյանի կարծիքով, վաղ երկաթի դարաշրջանում «Մեծամոր»-ն արքունի քաղաք էր¹⁵:

Կարծում ենք, ասվածը միանգամայն բավարար է ընդունելու, որ «Մեծամորը» և՛ իր տեղադրությամբ, և՛ ժամանակագրությամբ, և՛ «արքայանիստ քաղաք» հասկացությանը լիովին համապատասխանելու իրողությամբ, ամենայն հավանականությամբ, պիտի լիներ այն քաղաքը, որը Պատմահոր մեջբերած վիպական պատառիկում անվանված է Արտիմեդ¹⁶: Շրեշ բլուրից ոչ հեռու, Քասախ գետին նույնչափ մոտ, նման հզորության

¹¹ Առայժմ պայմանականորեն ընդունենք այս ժամանակահատվածը, քանի որ, ըստ Խորենացու, «վիպական» Երվանդ արքան՝ Երվանդ առաջինն է (Խոբրե և Գի, II, ԿԵ):

¹² Դժվար է ընդհանրացված և միարժեքորեն ճշգրիտ սահմանում գտնել քաղաքը հասկացությունը բնութագրելու համար: Այն շատ տարողունակ է և դրան անդրադառնալու առիթներ դեռ կունենանք: Այստեղ նշենք միայն քննարկվող ժամանակաշրջանի քաղաքի հիմնական հատկանիշներից մի քանիսը. ա) բնակավայրի պարսպապատ (պաշտպանված) լինելը, բ) միջնաբերդի գոյությունը, գ) պաշտամունքային և աշխարհիկ որոշ կառույցների կոթողային ճարտարապետությունը, դ) արտադրական շինությունների առկայությունը: Թվարկված և չթվարկված մի խումբ այլ հատկանիշներով էլ պայմանավորված է քաղաքի գերակայությունը մերձակա մյուս բնակավայրերի նկատմամբ, դրանցում արհեստների և առևտրի կենտրոնացումը, բնակչության համեմատական մեծաքանակությունը և այլն:

¹³ Լ. Բարսեղյան. Ուշ բրոնզե էպոխայի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ. - ՊԲՀ, 1962, -3, էջ 259-260, Ա. Ա. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 88.

¹⁴ Է. Վ. Խանզադյան, Գ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, էջ 8-11, E. K h a n z a d i a n. Metsamor 2. La necropole, vol. 1. Neuchâtel-Paris, 1995, p. 1, 103.

¹⁵ Է. Խանզադյան. Մեծամորում հայտնաբերված ոսկե իրերը. - Հին Հայաստանի ոսկին. Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1997, էջ 12-13:

¹⁶ Ենթադրելով, որ Արտիմեդը գտնվել է Էջմիածնի Մայր տաճարի մոտակայքում, Աս. Մնացականյանը, այնուամենայնիվ, հիշատակում է «ոչ այնքան հեռու գտնվող Մեծամորը», որպես «առավել հին պաշտամունքային կենտրոն» (Ա. Շ. Մանգալյան, նշվ. աշխ., էջ 226, ծան. 59):

և նշանակության մեկ այլ քաղաք մ. թ. ա. I հազարամյակի I կեսում դժվար թե գոյություն ունենար¹⁷: Այստեղ պիտի հաշվի առնել երկու կարևոր հանգամանք: Նախ՝ անցած ավելի քան հարյուր տարվա ընթացքում այդ տեղանքը հնագիտորեն համեմատաբար լավ է ուսումնասիրվել և առայժմ վաղ երկաթի դարաշրջանի մեկ այլ քաղաք չի հայտնաբերվել¹⁸: Երկրորդ՝ ժամանակի քաղաքաշինությունն ուներ իր սկզբունքները, իսկ տեղանքի մակերևույթը քաղաքաշինարարներին մեկ այլ նպաստավոր դիրք չէր ընձեռում¹⁹: Հարկ է նկատի ունենալ, որ Արարատյան դաշտի այդ հատվածում՝ Քասախ գետի շրջակայքում, բնական այլ բարձրություններ, բլուրներ չկան: Իսկ այստեղ-այնտեղ կղզիների պես հարթավայրից ընդամենը 3-4 մ վեր բարձրացող արհեստական հողաբլուրները (մոխրաբլուր-

¹⁷ Մեծամոր հնավայրի տարածքում փոփոխ Տարոնիկ գյուղը գտնվում է Էջմիածնից ընդամենը 8 կմ հեռավորության վրա (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 618): Հին քաղաքի (իմա՝ Արտիմեդի) հյուսիսարևելյան արվարձանները, բնականաբար, գտնվել են Շրեշ բլուրին էՔլ ավելի մոտիկ: Ինչպես գիտենք, Ստրեստանում գործածվող երկարության չափը մոտավորապես հավասար էր 7-8 կմ կամ երկժամյա երթով անցնելիք ճանապարհի (Մ. Մ. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту. - «Вестник древней истории», 1951, ¹ 2, с. 267, прим. 12; Г. А. Меликишвили. Наир-Урарту. Тбилиси, 1954, с. 45, 275, 288, 291): Բացառված չէ, որ այն կիրառված լինի նաև Վանի թագավորությունում, հատկապես, եթե նկատի ունենանք ուրարտական և ասուրական օկանգունո-ի գրեթե նույնականությունը՝ 0,51-0,52 մ (А. В. Сивков. Об основных линейных мерах Урарту и древней Армении. - «Известия АН Арм.ССР, 1944, ¹ 1-2, с. 85-88): Նմանապես հայտնի է, որ հին աշխարհում որպես հեռավորության միավոր օգտագործվում էր նաև ձայնաչափը (տե՛ս Հ ռ մ եր ո ս. Ողիսական, Երևան, 1988, VI): Մասնավորապես, «կովի բառաչի լսելիության» հեռավորությունը հավասար էր համարվում 7 կմ (Махабхарата, V. Удьяогпарва или Книга о старании. Пер. с санскрита и комм. В. И. Кальянова. Л., 1976, с. 353, 551, прим. 40): Մտացվում է, որ «Վարդգես մանուկը» կանգ է առել Արտիմեդից մոտավորապես 1 «ծերս» կամ «կովի բառաչի լսելիության» հեռավորության վրա: Հետաքրքիր է նաև, որ հնում պատերազմի դաշտից հիշյալ տարածության վրա գտնվելն արդեն անփոփոխ էր համարվում:

¹⁸ Արտիմեդ քաղաքի հետ նույնականացնելիս, բնականաբար, Շրեշ բլուրից դեպի հյուսիս գտնվող նշանավոր հին բնակավայրերը՝ Աշտարակը, Օշականը, Աղթամիրը և այլն, հաշվի չեն առնվում, քանի որ Քասախի ակունքներից (հյուսիսից) գետի ափերով դեպի հարավ շարժվողը նախ կհասներ հենց այդ բնակավայրերին (թվարկված հերթականությամբ) և այլևս կարիք չէր ունենա ճանապարհը շարունակել մինչև Շրեշ բլուր: Այնուամենայնիվ, եթե որևէ գորավար որոշեր նման գորաշարժ կատարել, ապա դրա հետևանքով Շրեշ բլուրի մոտակայքում հայտնված նրա գորքը նախալեռնային (համեմատաբար բարձր) գոտու ամրություններում տեղակայված գորամիավորումների նկատմամբ կհայտնվեր բացահայտ անշահավետ դիրքում:

¹⁹ Վաղ երկաթի դարաշրջանի քաղաքաշինությանը բնորոշ են բարձունքների վրա կառուցված «անտիկ» միջնաբերդերը (Գ. Ե. Արեշյան, Կ. Կ. Ղաֆադարյան. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում. - Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 70-71): Որմնահեցեր կամ աշտարակներ ունեցող պարիսպներով շրջապատված այդ տարածքների պատկանելի չափերը պայմանավորված են դրանցում մոնումենտալ պաշտամունքային (տաճարական) և աշխարհիկ (պալատական) շինությունների, ինչպես նաև օժանդակ կառույցների առկայությամբ (Մ. Մ. Дьяконов. История Мидии. М.-Л., 1956, с. 185-186, 411; В. М. Массон. Экономика и социальный строй древних обществ (в свете данных археологии). Л., 1976, с. 144): Ուրարտական քաղաքները ևս, որպես կանոն, «փոփոխ էին բարձր բլուրների ստորոտներում, որոնց զագաթներին, շրջապատված հզոր պարիսպներով, վեր էին խոյանում նրանց միջնաբերդերը» (Կ. Լ. Հովհաննիսյան. Ուրարտական ճարտարապետությունը. - Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, էջ 92):

ները)²⁰ կարող են միայն հուշել, որ արդեն պղնձեքարի և վաղ բրոնզի դարաշրջաններում այդ տարածքը խիտ բնակեցված է եղել:

Քննարկվող հարցի կապակցությամբ ուշադրության են արժանի նաև Ա. Շ. Մնացականյանի հետևյալ եզրակացությունները. ա) Արտիմեդ քաղաքը, հավանաբար, կոչվել է սրբավայրի և աստվածության անունով²¹, բ) «Տիգրան և Աժդահակ» վեպում նկարագրված սրբազան լեռան գագաթին ծննդաբերող կինը հայոց Մայր աստվածուհին է²²: Եթե այս եզրահանգումները ճիշտ են, ապա բնական կլինի ենթադրել, որ Արտիմեդ քաղաքում պիտի լինեին սրբավայր՝ նվիրված «Արտեմիսի» կամ որ նույնն է՝ Մեծ մոր պաշտամունքին, և որ Մայր աստվածուհին, թերևս, պատկերվել է ծննդաբերող կնոջ կերպարանքով: Մեծամորում այդպիսի սրբավայր իրոք կա, և դա չի կարելի համարել պատահական զուգադիպություն: Պեղումներով այստեղ հայտնաբերվել է 7 տաճարից բաղկացած պաշտամունքային համալիր²³, որի երկու գլխավոր սրբարաններից մեկը՝ ճախակողմյանը, ըստ բերված փաստարկների, ձևոված է եղել Մայր աստվածուհուն²⁴: Վերջինիս կերպարը խորհրդանշող կոթողում պեղող հնագետը տեսնում է ծննդաբերող աստվածության հատկանիշներ՝ համադրություններ կատարելով ծննդաբերողի դիրքով պատկերված և այլ մշակույթների պատկանող համանման արտեֆակտների հետ: Ավելի՛ն: Մեծամորյան մեկ այլ գտածո հիմք է տալիս խոսելու Ուազա երկրում հիշյալ դիցուհու պաշտամունքի խոր արմատների մասին ևս: Նկատի ունենք միջնաբերդի ուշբրոնզեդարյան շերտում հայտնաբերված թրձակավե արձանիկը: Այն եղջերավոր է, գլխանոց է կրում, ստինքները շեշտված են, ոտքերը ծավված են և լայն բացված: Է. Վ. Խանգաղյանի կարծիքով, վերջինս՝ իր մի շարք հատկանիշներով, հիշեցնում է առավել վաղ դարաշրջանների «ծննդաբերող աստվածուհիների» արձանիկները²⁵:

Անդրադառնանք նաև վիպական կերպարների անուններին: Հ. Աճառյանի կարծիքով, Վարդգես անունը «հնում շատ անսովոր» էր²⁶: Խորենացու փրկած բեկո-

²⁰ Ի դեպ, դրանցից երկուսը հենց այդպես էլ կոչվում են. մեկը՝ Կղզյակ բլուր, մյուսը՝ Մոխրաբլուր:

²¹ Ըստ պատմադիցաբանական մտածողության՝ քաղաքը Մայր-երկիր, Մայր-հող առավել ընդհանուր և հին գաղափարի կերպավորումն է և համադրելի է ծիսական կենտրոն, տաճար, գոհարան հասկացություններին (В. Н. Топоров. Заметки по реконструкции текстов. – Исследования по структуре текста. М., 1987, с. 124–130): Այս առումով հետաքրքիր է թվում նաև Գ. Տեր-Սկրտչյանի կարծիքն Արտիմեդ դիցուհու վերաբերյալ, ըստ որի «Արտիմեդ կամ Դեմետրա դիցուհին դարձել է Գիսանի եղբայր Դեմետր...» (տե՛ս Պ. Հ. Հակոբյան. Գալուստ Տեր Սկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին. – Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 221):

²² Ա. Շ. Մնացականյանի նշվ. աշխ., էջ 226:

²³ Է. Վ. Խանգաղյանը տաճարական համալիրը թվագրում է մ. թ. ա. II հազարամյակի վերջով – I հազարամյակի սկզբով: Շերտագրական դիտողություններով պարզվում է նաև, որ վերջինիս գործառնության ժամանակագրական վերին սահմանը համընկնում է Ուազա երկրում ուրարտացիների հայտնվելու ժամանակաշրջանին:

²⁴ Է. Վ. Խանգաղյան, Կ. Հ. Մկրտչյան և, Է. Ս. Պարսամյան. նշվ. աշխ., էջ 107–123, նկ. 110, ադ. XXV:

²⁵ Է. Խանգաղյան. Մեծամորում հայտնաբերված արձանիկներն ու կուռքերը. – Հայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս, Ձեկուցումների թեզիսներ, Երևան, 1997, էջ 17–18:

²⁶ Հ. Աճառյան. Հայոց անձանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 109:

րում այն հանդիպում է «Վարդգէս մանուկ» զուգորդությամբ: Հայերեն «մանուկ»-ը նույնարմատ է հնդեվրոպական *mənū- նախաձևին, որի հիման վրա ուրարտական Մինուա կամ Մե(h)նուա (Menua, Meinua) արքայի անվան համար առաջարկված է հայերեն ստուգաբանություն. «...թերևս ուրարտ. Menua անվան մեջ նույնպես առկա է հայ. Մանուկ-ի առանց փոքրացուցիչ ածանցի ձևը (Մանու- <h-ե. *mənū- «փոքր»)»²⁷: Ասվածից ելնելով, կարելի է որպես վարկած առաջ քաշել այն տեսակետը, որ «Վարդգէս» անվանը հաջորդող «մանուկ»-ը կարող էր լինել ոչ թե հասարակ, այլ՝ հատուկ անուն («Մանուկ»), այսինքն՝ հայրանուն (Մե(h)նուա կամ Մինուա-Մանու արքայանունը): Մինուա/Մե(h)նուայի զարմի ամենաակնառու ներկայացուցիչը նրա Արգիշտի որդին էր: Արգիշտի անձնանունը խիստ մոտ է Հսրիլոսի հաղորդած՝ Ἀργήστης (ռուսերեն՝ Аргест) անվանը²⁸: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի և Ա. Ե. Պետրոսյանի՝ Argišti անունը հայերենում, հավանաբար, կհնչեր Արգեստ²⁹: Վերջինս կարող էր «Վ»-ի հավելումով դառնալ Վարգեստ³⁰ և ժողովրդական ստուգաբա-

²⁷ Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 441. տե՛ս նաև Ա. Ե. Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման ինդիքը, Երևան, 1997, էջ 99:

²⁸ Э с х и л. Трагедии. В пер. Вяч. Иванова. М., 1989, с. 26; Э. А. Грантовский. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с. 308, 314. Չի բացառվում, որ Հսրիլոսի «Պարսիկներ» ողբերգությունում գոհվածների շարքում հիշատակված Արգեստը Քեերքսեսի բանակում հայկական զորքերի հրամանատարը լիներ, քանի որ արշավանքում գոհված բուն պարսկական մեծատոհմիկների թվում նրա անունը բացակայում է, իսկ Արտեմիդի, Դադակի, Արսամի և ուրիշների անուններն առկա են (Э с х и л. Նշվ. աշխ., էջ 45): Հետաքրքիր է, որ Արգեստի անունը հիշվում է հեծելագնդի հրամանատարներից մեկի՝ Արսամի անվան անմիջական հարևանությամբ, այսինքն՝ նա ևս կարող էր հեծելագործի հրամանատար լինել: Նշված ժամանակաշրջանում Հայաստանի կառավարիչները Երվանդունիներն էին (Գ. Տիրացյան. Երվանդունիներ. - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 640): Այս կերպ Արգեստ անունն առնչվում է Երվանդունիների տոհմին:

²⁹ Հարցի վերաբերյալ մանրամասն խորհրդատվության համար երախտապարտ եմ Ա. Ե. Պետրոսյանին և երջանկահիշատակ Գ. Բ. Ջահուկյանին: Մեր կարծիքով, Argišti անձնանունը կարող է առնչվել նաև հայկական *Արգաստ գետանվանը և Արգաստովիտ կամ Արգաստեայ ովիտ գավառի անվանը (Ա. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 39). հմմտ. Ռուսայի հովիտ տեղանվան հետ (Մ. Ա. Меликишивили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 344-346 (1 281); Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 114; Ն ու յ ն ի՝ Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 344-347 (1 421), 487, 519):

³⁰ Հետազոտողների կարծիքով, ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված մի շարք դիցանուններ և տեղանուններ հարկ է ընթերցել «Ու»-ի կամ «Վ»-ի հավելումով՝ Ուա, Ուարուբանի, Վազա, Վարդա/ն (Н. В. Арутюнян. Новые урартские надписи Кармир-блуга. Ереван, 1966, с. 84, 91, прим. 43; Б о х Ы Э ЭՅ՝ Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 426; Ա. Պետրոսյան. Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս. - Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 166, Վ. Ա. Գայսերյան. Սեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը. - ՊԷՀ, 1985, -1, էջ 210, 214): «Վ» սկզբնատառի ավելացումով, ըստ Ն. Ադունցի, Ասպուրակ անձնանունը դարձել է Վասպուրակ (Ն. Ադունց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 445-446): Ի դեպ, բերված օրինակն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ, մեր կարծիքով, այստեղ խոսքը վերաբերվում է հայկական տառադարձությամբ հնչող ուրարտական ևս մեկ արքայի՝ Բշպուհ/ինիի անվանը, ըստ որի էլ, հավանաբար, կոչվել է Վասպուրականը (Գ. Ս. Թումանյան. Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 2005, էջ 28, ծան. 120): □Վ□ սկզբնատառի ավելացման մեկ այլ օրինակ ենք տեսնում Խորենացու հիշատակած Վարբակես անվան մեջ (տե՛ս Խորենացի, I, ԲԱ), որը նույնանուն է Կոտեսիսի հաղորդած Արբակեսին (И. М. Дьяконов. История Мидии, с. 313, 352; Ա. Տ. Երեմյան. Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VI դդ.

նուրթյամբ վերախմաստավորվելով՝ Վարդգես: Այսպիսով՝ ուրարտական և ասուրական սեպագիր արձանագրություններից հայտնի արքան՝ Վանի թագավորության հզորագույն տիրակալը՝ Արգիշտի I կամ «Մինուայի որդի Արգիշտին», հայկական բանահյուսության վիպական պատառիկում, հավանաբար, դարձել է «Վարդգես մանուկ», մինչև Խորենացուն հասնելը, ըստ երևույթին, անցնելով «*Մանուի որդի Արգեստ», «*Մանու(կ)ի Վարգեստ», «*Վարգեստ Մանուկ» միջանկյալ փուլերը:

Առաջադրված վարկածը հաստատող ուղղակի վկայություններն առայժմ բացակայում են, սակայն կան «հուշող» որոշակի տեղեկություններ, որոնց վրա կկամենայինք ուշադրություն հրավիրել:

Քննարկվող վիպական հատվածի մեջբերումից անմիջապես հետո Պատմահայրը հարկ է համարում ավելացնել. «Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքորյն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս»³¹: Խորենացու սույն հավելումը կարծես նախագրուշացում է՝ ուղղված հետագա այն ուսումնասիրողներին, ովքեր կփորձեն չհամաձայնվել Մ. Աբեղյանի հետ, որ «կոել կոփել զգուռնն» արտահայտությունը հիշյալ վիպական պատառիկում նշանակում է «աղջիկ ուզել»³²: Ուրեմն, բանահյուսական փրկված բեկորը և Խորենացու հավելյալ տեղեկությունները համադրելով, կարելի է եզրակացնել, որ Վարդգես մանուկը «խնամախոսության» էր եկել, իսկ հարսնացուն Երվանդ արքայի քույրն էր: Եթե Վարդգես = Արգեստ նույնացումը ճիշտ է, ապա առասպելական կերպարների պատմական նախատիպերի փնտրտուքի արդյունքում կստացվի, որ Արգիշտի I արքայի կինը Ուազա երկրի տիրակալի քույրն էր:

Որքանո՞վ է այս հետևությունը համապատասխանում իրականությանը, դժվար է ասել: Ուրարտական սեպագիր աղբյուրներից հայտնի է միայն, որ Վանի թագավորության կազմում Ուազա երկրի տարածքն ընդգրկվել է Արգիշտի I օրոք³³: Ինչպես ամենուրեք, այստեղ էլ ուրարտացիները, ըստ երևույթին, հանդիպել են դիմադրության (գոնե՛ք բնաշխարհի յուրացման սկզբնական փուլում): Այլ կերպ դժվար է մեկնաբանել այն իրողությունը, որ թե՛ Մեծամոր հնավայրում, թե՛ երկրի նշանակալից այլ բնակավայրերում՝ Արմավիր-Արգիշտիխինլիում, Կարմիր բլուրի բնակատեղիում, առկա են երկաթեդարյան ավերված-հրդեհված շերտեր, որոնց հաջորդում են ուրարտական մշակութային շերտերը³⁴: Սակայն ուրարտական արձանագրությունները, որոնցում, որպես կանոն, տեղեկություններ

մ. թ. ա.) – ՊԲՀ, 1968, -3, էջ 101): Թերևս, ավելորդ չէ նշել, որ տասնամյակներ առաջ Աշտարակում Արեգնազ անունը տալու փոխարեն ասում էին «Վարքազ կամ Վարքազ»:

³¹ Խորենացի, II, ԿԵ:

³² Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 553–554:

³³ Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи, с. 221–224 (1 127, IV), 238–239 (1 128, B2), 265–266 (1 142); Н. В. А р у т ю н я н. Новые урартские надписи Кармир-Блур, с. 84; Ն ու յ ն ի՝ Топонимика Урарту, с. 14.

³⁴ Է. Վ. Խանգաղյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարուսմյան. նշվ. աշխ., էջ 56–58: А. А. М а р т и р о с я н. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 10, 59; Ն ու յ ն ի՝ Аргиштихинили. Ереван, 1974, с. 19.

են հաղորդվում նվաճված երկրների, դրանց արքաների և իրենց ցույց տրված դիմադրության վերաբերյալ, այս անգամ՝ հիշյալ առումով, անհասկանալի լռություն են պահպանում³⁵։ Ավելի ն։ Մեպագիր աղբյուրներում տեղեկություններ չկան նաև Ուազայի վերանվաճման մասին, մինչդեռ գրավված մյուս երկրների նկատմամբ կրկնվող արշավանքները սովորական երևույթ էին³⁶։ Բացառված չէ, որ առաջին հայացքից տարօրինակ թվացող իրողությունների հիմքում ընկած լինեք այնպիսի կարևոր իրադարձություն, որը կարող էր որոշակիորեն նպաստել, որպեսզի «թշնամական Ուազա երկիրը» Վանի թագավորության կազմում ընդգրկվեր մեկընդմիջտ և դառնար դրա հիմնական մարզերից մեկը։ Արգիշտի I ամուսնությունը «Ուազայի Օրիորդի» հետ, անշուշտ, ամրապնդելու էր ուրարտական գերիշխանությունն այդ երկրում։ Առաջ քաշված այս վարկածի օգտին, մեր կարծիքով, կա ևս մեկ կարևոր կոման։ Դա Արգիշտի I արձանագրություններից մեկում (Խորխոթյան տարեգրություն) եղած վկայությունն է Էթիունիի Արդինը/ե քաղաքի «աստծուն» (aštiuzzi)³⁷ առնանգելու մասին³⁸։ Առնանգումը կազմակերպողները, հավանաբար, Էթիունյան դաշնության այն երկրներն էին (Էրիախի, Կատարգա, Ուիտերուխի), որոնց դեմ Արգիշտի I այդ միջադեպից հետո պատժիչ արշավանք է ձեռնարկել։ Այս հանգամանքը մտածել է տալիս, որ Էթիունիի Արդինը/ե քաղաքը, ըստ երևույթին, հրաժարվել էր իր նախկին դաշնակիցներից և գտնվում էր Արգիշտի I հովանավորության տակ³⁹։ Այս Արդինը/ե ն, հավանաբար, Ուազա երկրի արքունի քաղաքն էր⁴⁰։ Հնարավոր է, որ ուրարտական

³⁵ Н. В. Арутюнян. Биаинили, с. 209; Д. Саркисян. О некоторых документах страны Аза, связанных с социальными отношениями в Урарту. – «Вестник общественных наук» АН АрмССР 1988, 1 3, с. 71.

³⁶ Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 59, А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 19. Այն հարցին, թե որքան հաստատուն հիմնավորվեցին ուրարտացիները «թշնամական երկրում», ուշադրություն է դարձրել նաև Գ. Ա. Մելիքիշվիլին (Գ. А. Меликшвили. Напри-Урарту, с. 110):

³⁷ Ժամանակին Գ. Մելիքիշվիլին է նկատել, որ սեպագիր արձանագրության aštiuzzi-ն համարժեք է հայերեն աստուած բառին. տե՛ս Գ. А. Меликшвили. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I. – Переднеазиатский сборник, III. М., 1979, с. 174–176. Մեր կարծիքով, ուրարտական արձանագրության մեջ պարզապես հայերեն բառ է գործածվել, այսինքն՝ նույնությամբ մեջ է բերվել «կուռքի» բուն անվանումը՝ առանց թարգմանության, ինչպես որ այն կոչվել է Ազա երկրում։

³⁸ ^{KUR}E-ti-ú-ni-[ni] ^{URU}Ar-di-ni-e-i áš-ti-ú-zi ir-bi-la-[ni]. Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей, с. 175–180 (1 173, V). Հարցի վերաբերյալ տե՛ս նաև Հ ո վ հ. Կ ա ռ ա գ յ ո զ յ ա ն. Մեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 301, Գ. А. Меликшвили. Урартские клинообразные надписи, с. 225–228 (1 127, V); F. W. K i c h. Handbuch der chaldischen Inschriften, II. Graz, 1957, S. 97 (№ 80, § 12) և այլն։

³⁹ Չի բացառվում, որ Էթիունյան դաշնության հյուսիսային երկրները, պատմական իրադարձությունների բերումով գրկված լինելով դեպի նախկին պաշտամունքային կենտրոն ուխտագնացության հնարավորությունից, որոշել են առնանգել իրենց ընդհանուր սրբությունը՝ Էթիունիի Արդինը/ե քաղաքի աստծո արձանը։

⁴⁰ Ուրարտերենում Ardin բառը պարզապես քաղաք էր նշանակում։ Այդպես էր կոչվում նաև Մուծածիր քաղաքը (Մահկերտ տուն գավառում). տե՛ս М. А. Хачикян. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 45, 134. Մա շվոթություն է առաջացրել որոշ հետազոտողների մոտ, ովքեր քննարկվող արձանագրության վկայությունը Էթիունիի Արդինը/ե քաղաքի վերաբերյալ հաշվի չառնելով, թյուրիմացաբար ենթադրել են, թե aštiuzzi-ն առնանգվել է Արդինը/ե-Մուծածիրից։ Մինչդեռ, ինչպես վերն ասվեց, ըստ Արգիշտի I հիշյալ արձանագրության, առնանգվել է ոչ թե Ուրարտուի գլխավոր աստվածության՝ Խալդիի արձանը, այլ Էթիունի երկրի Արդինը/ե քաղաքի aštiuzzi-ն։ Հավելենք, որ Հայկական լեռնաշխարհում և դրա հարակից տարածքներում մինչ օրս կան արդ արմատով կազմված բազմաթիվ բնակավայրեր՝ Արդն, Արդվի, Արդվին և այլն (Թ. Խ.

արձանագրության հիշյալ Արդինեն լինի հենց այն քաղաքը, որը «Վարդգես մանկան» վիպական պատատիկում Խորենացու ձեռքով հիշատակվել է Արտիմեդ անունով: Ակնհայտ է, որ այս երկու քաղաքանունները (Արդինեն, Արտիմեդ) իրար բավականաչափ մոտ են նաև հնչյունաբանորեն:

Քննարկվող հարցին առնչվող մեկ փաստ է հայտնաբերվել պատմական Վարդգեսավան-Վաղարշապատում: Էջմիածնի Մայր տաճարի վերականգնողական աշխատանքների ընթացքում, եկեղեցու բեմի տակ, ի թիվս այլ հնագիտական առարկաների, գտնվել է նաև ուրարտական բազալտե հուշակոթող⁴¹: Գ. Ա. Տիրացյանը հիշյալ գտածոն համադրում է Չվարթնոցի և Ոսկերչուրի (Ալթին թեփե) նմանատիպ հուշակոթողների⁴², որոնք ուրարտական մշակույթի արգասիք են⁴³: Քննարկվող տիպին է պատկանում նաև Կելիշինի արձանագրակոթողը⁴⁴, իսկ Թոփրաք կալեում գտնված մի կնքադրոշմ պատկերում է համանման երեք կոթողների առջև կատարվող արարողությունը⁴⁵: Նմանօրինակ քարակոթողները, առհասարակ, բնորոշ են ուրարտական մշակույթին⁴⁶:

Քանի որ, հետազոտողների փաստարկներով, Էջմիածնի կաթողիկեն կառուցված է հին Վաղարշապատի միջնաբերդի տարածքում, իսկ Վաղարշապատը, իր հերթին, ներառել է իր մեջ «Վարդգեսի աւանը»⁴⁷, ապա Վարդգեսավանի հիմնադրման ժամանակը, անշուշտ, հնարավոր պիտի լինի որոշել հիշյալ տեղանքի (իմա՝ բնակատեղի կենտրոնական հատվածի) մշակութային ստորին շերտերի թվագրությամբ: Նման հնարավորություն, առայժմ, մենք չունենք, սակայն չենք կարող հաշվի չառնել նաև, որ «ձեռքի տակ» եղած ամենավաղ գտածոն ուրարտական բազալտե կոթողն է:

Հ ա կ ո բ ՚ յ ա ն, Մ տ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե դ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, 409-417): Միանգամայն անհավանական է նաև, որ էթիունցիները կարողանային արշավել Մուծածիր, առևանգել Խալդիի արձանը և հաջողությամբ ետ դառնալ հենց Արգիշտի I օրոք, երբ Վանի թագավորությունը հասել էր իր հզորության գագաթնակետին:

⁴¹ Ակնարկի հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, լուսանկ. 38:

⁴² Г. А. Т и р а ц я н. К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата.– ИФЖ, 1977, 1 2, с. 84.

⁴³ T. Ö z g ü ç. Altintepe, II. Tombs, Storehouse and Ivories.– Türk Tarih Kurumu Yayınlarından, V. Seri, № 27. Ankara, 1969, pp. 70–71, 73–74, fig. 29–33, pl. XXVI–XXVII.

⁴⁴ Կոթողի նկարագրությունը և գունավոր լուսանկարը տե՛ս M. S a l v i n i. La civiltà dell'Urartu.– Le Scienze: edizione italiana di Scientific American, num. 204, an. XVIII, vol. XXXV. Milano, agosto 1985, p. 78. Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն ր գտնում էր, որ հիշյալ «կապույտ սյունը» ձևով նման է Չվարթնոցի կոթողին և ուրարտական նույնատիպ այլ քարակոթողների, որոնք, ինչպես և խաչքարերը, «փշիկով» ամրացված են իրենց պատվանդանին (Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 142): Այժմ Վանի թանգարանի բակում են գտնվում վերին մասում կորացող ուղղանկյուն պրիզմայաձև մի շարք այլ կոթողներ:

⁴⁵ Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 228, рис. 73; Կ. Լ. Հ ն վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 174:

⁴⁶ F. W. K ö n i g. Handbuch der chaldischen Inschriften, II, S. 250–260, taf. 119–121.

⁴⁷ Ա. Ք ա լ ա ն թ ա ր. Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 54–55, Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении. Ереван, 1988, с. 153.

Այն կարող է հուշել, որ «Վարդգէսի աւանի» հիմնադիրը, հավանաբար, Վանի արքաներից է⁴⁸:

Մյուս իրողությունը, որը կարելի է համարել կողմնակի վկայություն՝ ի նպաստ առաջադրված վարկածի, բիայնական արքայացանկում Ռուսա անունով տիրակալների առկայությունն է: Այդ անունը կրող առաջին արքան Արգիշտի I թոռն է՝ Ռուսա Սարդուրորդին: Նրանից առաջ՝ շուրջ մեկ դար, ուրարտական որևէ արքա այդպես չի անվանակոչվել: Ժամանակին Գ. Ա. Ղափանցյանն առաջ է քաշել այն տեսակետը, որ Ռուսա և Երուագ անձնանունները համարժեք են⁴⁹, իսկ Ս. Տ. Երեմյանը «Երուագ»-ին զուգահեռ առաջարկել է «Արուագ» ձևը⁵⁰: Քանի որ Երվագ անունը հանդիպում է Երվանդունիների տոհմում, ապա կարելի է ենթադրել, որ Ռուսա Սարդուրորդու նախնիներից մեկը, ըստ երևույթին, ամուսնացել է Երվանդունի օրիորդի հետ⁵¹:

Այսպիսով՝ V դարում տուհերը, հավանաբար, բնակվել են գողերձականների և վրացիների հարևանությամբ (նրանց միջև), իսկ VII դարում «Տուհաց գաւառ»-ը, ըստ երևույթին, նույնանուն էր Թաւր (Թոր) և Տանիս (Տունիս)-խեւ գավառների կամ առնվազն սրանցից մեկի հետ՝ զբաղեցնելով Թոռեղքի լեռներից հյուսիս՝ մինչև Կուր գետն ընկած տարածքը:

«Երուանդ արքայի Արտիմէդ քաղաքը» նույնանուն է Արարատյան դաշտավայրի հնագույն բնակավայրերից մեկին, որն այսօր որպես հնավայր հայտնի է «Մեծամոր» անունով, իսկ մ. թ. ա. VIII դարի սկզբում, ամենայն հավանականությամբ, Ուագա երկրի արքայանիստ քաղաքն էր և «Խորխոռոյան տարեգրությունում» հիշատակված է Արդինը/է անունով:

Հնարավոր է, որ «Վարդգես մանկան» վիպական կերպարի համար պատմական նախատիպ է հանդիսացել Մինուայի/Մե(հ)նուայի որդի Արգիշտին: Եթե պատմահնագիտական և լեզվաբանական մի խումբ անուղղակի տվյալների վրա հիմնված այս եզրահանգումը ճիշտ է, ապա կարելի է որոշ հետևություններ անել.

⁴⁸ Վարդգես = Արգիշտի նույնացման կապակցությամբ հարկ է ավելացնել, որ «Վարդգես մանկան» վիպական հատվածում կարող էին պահպանված լինել Արգիշտի I գահակալության երկրորդ տարվա իրադարձությունների արձագանքները, երբ «Ջաւախք Վերին երկիրը» (KURzabaae šili) նվաճելուց հետո բիայնական զորքերն արշավեցին դեպի հարավ, ի թիվս այլ «երկրների»՝ գրավելով նաև Շիրակը, ՕւՊՌուՍի ցեղի արքայանիստ քաղաքը և KURaruni երկիրը (Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, с. 210–213 (1 127, I), 234–236 (1 128 B1)):

⁴⁹ Գ. Ա. Ղափանցյանն նշվ. աշխ., էջ 215, Գ. Ա. Ղափանցյանն Արա Գեղեցկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 98:

⁵⁰ Ս. Տ. Երեմյանն. Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 108:

⁵¹ Տեղին է հիշել ամենուրեք լայնորեն տարածված այն սովորությունը, որ մանկանը հաճախ տրվում է մահացած նախնիներից մեկի անունը՝ վերջինիս վերադարձը նմանակելով (Д ж. Т о м с о н. Исследования по истории древнеереческого общества. Доисторический эгейский мир. М., 1958, с. 40): Հին Մերձավոր Արևելքում ևս երեխային չէին կոչում դեռևս ողջ հարազատի անունով, որովհետև դա կնշանակեր այդ հարազատի մահը ցանկանալ (И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.–Л., 1963, с. 62): Ըստ ազգագրական ուսումնասիրությունների՝ նույն սովորությունը կար և հայերի մոտ (Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)– Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, 1981, էջ 50): Եթե Վանի թագավորությունում ևս տարածված է եղել այդ ավանդույթը, ապա Ռուսա I, հավանաբար, ծնվել է իր կնանկավոր պապի կենդանության օրոք:

ա) Արգիշտի I կերպարը վիպականացվել է, նա դարձել է ասքի հերոս⁵²: Խորենացու փրկած պատատիկը, ըստ երևույթին, Վարդգես-Արգեստի մասին պատմող ժողովրդական գրույցի սկիզբն է: Այն, հավանաբար, ստեղծվել է Արարատյան դաշտում և դեպքերի նկարագրությունն էլ սկսվել է հենց այն իրադարձությունից, որն անմիջականորեն առնչվում է տեղաբնիկ հայերին:

բ) Մինուայի որդի Արգիշտին Արարատյան դաշտ է իջել հյուսիսից՝ Քասախ գետի փերով: «Ուազայի Օրիորդի» հետ դինաստիական ամուսնությամբ նա ամրապնդել է իր իշխանությունը տերության համար ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող հենակետում: Արարատյան դաշտավայրին, այդուհետ, մեկընդմիջտ վերապահվելու էր հայոց պետականության հիմնախարսիսի դերը:

գ) Արգիշտի արքան է հիմնադրել Շրեշ բլուրից ոչ հեռու գտնվող «Վարդգեսի աւանը» (*Արգեստավա ն), որի կենտրոնն այժմյան Էջմիածնի մայր տաճարի տարածքում էր:

դ) Հնագույն Ուազա երկրի տիրակալ Երուանդի անունը, որը բացակայում է մինչ օրս հայտնի սեպագիր արձանագրություններում, քննարկվող վիպական հատվածում հիշվում է մ. թ. ա. VIII դարի առաջին քառորդի իրադարձությունների հետ կապված: Եթե անձնանունների նույնությունը պայմանավորված է դինաստիական ընդհանրությամբ, ապա հնարավոր է դառնում վերականգնել նաև այս երկրում մ. թ. ա. VIII դարի սկզբում իշխող հարստության անվանումը՝ Երվանդական (Երվանդունի):

Հայկական բանահյուսության վիպական փրկված բեկորները, որոնք դարեր շարունակ արժանացել են հայագետների ուշադրությանը, հետազոտողների համար այսօր էլ արդիական են:

НОВАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ ФРАГМЕНТА ЛЕГЕНДЫ О «ВАРДГЕСЕ МАНУКЕ»

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

В «Истории Армении» Мовсеса Хоренаци (кн. II, гл. 65) сохранился фрагмент древнеармянской легенды о «Вардгесе мануке». Возможно, что историческим прототипом легендарного образа «Вардгеса манука» являлся Аргишти, сын Минуа. Если данная историческая реконструкция выполнена нами правильно, то из этого можно сделать несколько выводов:

а) Образ Аргишти I приобрел эпичность, он стал героем легенды. Эпический фрагмент, дошедший до нас благодаря Хоренаци, по - видимому, является началом народного сказания о Вардгесе - Аргесте.

⁵² Բրոք, տարօրինակ կլիներ, եթե նման պատմական բացառիկ անձնավորության գործունեության արձագանքներն իսպառ ջնջված լինեին ժողովրդի հավաքական հիշողությունից:

Оно, вероятно, создавалось на Араратской равнине.

б) Аргишти, сын Минуа, сошел в Араратскую равнину с севера, по реке Касах. В результате династического брака с принцессой «страны Уаза» он укрепил свою власть на опорном пункте, имевшем важнейшее стратегическое значение для всего государства.

в) Царь Аргишти обосновал неподалеку от Шреш-Блур «поселок Вардгеса», центр которого находился на территории нынешнего Эчмиадзинского кафедрального собора.

г) Имя владыки древнейшей «страны Уаза» Еруанда, отсутствующее в известных по сей день клинообразных надписях, в обсуждаемом отрывке легенды упоминается в связи с событиями первой четверти VIII в. до н. э. Если тождественность личных имен обусловлена династической общностью, то становится возможным восстановить название господствующей в этой стране в начале VIII в. до н. э. династии – Ервандакан (Ервандуни).

A NEW INTERPRETATION OF A FRAGMENT OF THE LEGEND ABOUT “VARDGES MANOUK”

GAREGIN TOUMANYAN

S u m m a r y

A fragment of the old Armenian legend about “Vardges Manouk” was preserved in the “History of Armenia” by Movses Khorenatsi (book II, chapter 65).

Possibly, Argishti – the son of Menua was the historical prototype for the legendary character of “Vardges Manouk”. If this inference, based on a number of indirect historical-archeological and linguistic evidences is correct, several conclusions can be made:

a) Argishti I was celebrated and became a legendary character. The legend fragment that reached us thanks to Khorenatsi, possibly is the beginning of the popular legend about Vardges-Argest, most probably created in Ararat plain.

b) Argishti – the son of Menua descended to Ararat plain from the north – along the bank of Kasakh river. As a result of his dynastic marriage with the princess of the “Land Uaza”, he strengthened his power over this strategic base, which was crucially important for his state.

c) The king Argishti established “Vardges’ settlement” not far away from Shresh-Blur. The center of it was situated in the territory of Etchmiatsin cathedral.

d) The name of the ruler of the ancient “Land Uaza” – Yeruand, which was not found in the known to date cuneiform inscriptions, is mentioned in the discussed fragment in relation to the events of the first quarter of the 8th century B.C. If the similarity of human names is stipulated by dynastic commonality, it becomes possible to restore the name of the dynasty ruling in this land at the beginning of the 8th century B.C. – Yervandakan (Yervanduni).